Հեծանիվ-վազք-քայլք նախագծերի կազմակերպման նկարագրություն

Կրտսեր դպրոցում հեծանիվային, վազքի-քայլարշավի նախագծերն իրականացվում են 1-3-րդ դասարաններում «Ես և շրջակա աշխարհը»՝ «Ես և ինձ շրջապատող մարդիկ», «Անվտանգ երթևեկություն», «Մեր բակը», «Մեր թաղը», «Իմ քաղաքը», «Հայաստան» բաղկացուցիչներով, 4-5-րդ դասարաններում՝ «Հայրենագիտություն» դասընթացով: Դիզայն-կերպարվեստի, մեդիալրագրողի, կինոֆոտոգործ ընտրությամբ գործունեության բացօթյա պարապմունքների, պլեներների, ինչպես նաև բացօթյա ընթերցանության, շախմատային բաց մրցումների, էկոակցիաների, ֆլեշմոբների, ուսումնական բացօթյա այլ պարապմունքների կազմակերպման միջոցներ են:
Նախագծերն իրականացվում են տարիքային խմբերին համապատասխան, երթ-քայլարշավների համար նախատեսված օրացույցով: Ուսումնական պարապմունքների վայրը Բանգլադեշի, Երևանի (Երևանամերձ) բակերն են, պուրակները, կանաչ հարթակները, դիտարանները, փողոցները, պատմա-մշակութային բացօթյա թանգարանները: Կարող են կազմակերպվել նաև երևանյան արշավախմբային մեկօրյա գիշերումով հավաքներ:
Նախագծին ներկայացվող պահանջներ: Նախագիծը պիտի ունենա կազմակերպիչ-պատասխանատուի, bikemskh.wordpress.com բլոգներում հրապարակված՝

- ընտրված տարածքի մասին տեղեկատվություն,
- ձևակերպված ուսումնական խնդիրներ,
- անհրաժեշտ նյութերի թվարկում,
- երթուղու նախագծում-նկարագրություն,
- ժամանակահատվածը,
- մասնակիցների ցուցակը:

Մասնակից խմբում սովորողների առավելագույն թիվը 12-ն է, ուղեկից-կազմակերպիչների թիվը՝ 2-ը: Մասնակիցները նախապես ծանոթանում են անվտանգության կանոններին, ճանապարհ գնալու, հեծանվից օգտվելու կարգին: Կազմակերպիչ պատասխանատուն նախապես իմանում է յուրաքանչյուր մասնակցի հեծանիվ վարելու հմտության չափը: Մեկ օր առաջ ստուգում է, որ հեծանիվները սարքին լինեն:

Նախագիծը կարող է լինել երկու խմբերի համագործակցություն, ինչը հնարավորություն կտա կիրառելու և՛ հեծանիվը, և՛ վազքը, և՛ քայլքը՝ հաջորդաբար իրար փոխանցելով: Իրականացված նախագիծ-պարապմունքների արդյունքում սովորողի ձեռք բերած կարողություններրը, հմտությունները գրանցվում են սովորողի անհատական էլեկտրոնային թերթիկում: